ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

14 հունիսի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

80
(2930)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈ՞ՒՆ, ԹԵ՞ ԺԱՄԱՆՑ...

Հյուրախաղերով կամ աշխատանքային այցով Հայաստանում գտնվող ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը նախագահում է գրեթե 2 տարի:

2 տարվա ընթացքում ՀՀ նախագահի «գոյության ձայնը» հազվագյուտ է լսվել:

Հունիսի 12-ին Բաղրամյան-Դեմիրճյան խաչմերուկում ցուցարարների վրա կիրառելով անթույլատրելի տեսակի նռնակ՝ այդ թվում եւ բեկորային, փորձ արվեց «ցրելու» «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման մասնակիցներին, եւ ընդամենը մեկ օր անց միայն լսվեց ՀՀ նախագահի ձայնը, այն էլ՝ կրկին ոչ հուսադրող բովանդակությամբ:

«Ոստիկանները ստիպված են եղել ուժ կիրառել. մենք զգուշացրել ենք՝ զե՛րծ մնացեք ավելորդ լարվածությունից, իշխանության ներկայացուցիչների նկատմամբ օրինազանցություն մի՛ արեք, բայց իրենց պահվածքն այլ էր: Այսօրվա միտինգի կազմակերպիչներն այլ տրամաբանության մեջ են աշխատում: Իրենց չի բավարարում, որ երկրում վիճակը խաղաղ է», - ասել է Խաչատուրյանը:

Հայաստանում «ժամանակ անցկացնող» նախագահը 2023 թվականի 12 ամիսների ընթացքում ստացել է 15 մլն 794 հազար դրամ աշխատանքի վարձատրություն ՀՀ նախագահի աշխատակազմից:

Վահագն Խաչատուրյանը հայտարարագրել է 4 անշարժ գույք՝ 2 հողամաս, 1 ավտոտնակ եւ 1 բնակարան բազմաբնակարան շենքում:

Անշարժ գույքերից 2 հողամասը Խաչատուրյանը ժառանգություն է ստացել 2017 թվականին, մեկը Կոտայքի մարզի Ձորաղբյուր գյուղում, մյուսը Արաբկիր վարչական շրջանում:

ՀՀ նախագահին պատկանող տունը եւ ավտոտնակը գտնվում են Երեւանի Կենտրոն վարչական շրջանում. այս գույքերն էլ նախագահը նվիրատվություն է ստացել 2002 թվականին:

Նախագահը տրանսպորտային միջոցներ չի հայտարարագրել:

Նրա բանկային հաշիվների մնացորդները կազմում են 40 մլն դրամ եւ 1 հազար 200 դոլար, կանխիկ դրամական միջոցները կազմում են 1 մլն 200 հազար դրամ եւ 18 հազար դոլար:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, քաղաքական ժողով կանի: Կուսակցության քաղաքական ժողովի օրը նախնական որոշված է հունիսի 22-ը, իսկ ժողովի անցկացման տեղի հետ կապված դեռ վերջնական որոշում չկա: Սովորաբար, դրանք տեղի են ունենում Երեւանից դուրս: ՔՊ քաղաքական ժողովը կտեւի 2 օր: Սա թվով 4-րդ քաղաքական ժողովն է կուսակցության. նախորդը տեղի էր ունեցել Գյումրիում՝ անցյալ տարվա դեկտեմբերին: Նշենք, որ ՔՊ քաղաքական ժողովները տեղի են ունենում տարին 2 անգամ: Դրանց պարտադիր մասնակցում են ՔՊ վարչության անդամները, պատգամավորները, լինում են նաեւ հրավիրյալներ, իսկ օրակարգը հաստատում է վարչությունը:

«Ժողովուրդ» օրաթերթի իշխանական աղբյուրները փոխանցում են, որ Նիկոլ Փաշինյանին թիմակիցները ներկայացրել են, թե ընդդիմությանն արդեն «իրենց տեղն են դրել», իսկ սրբազան պայքարն արդեն «վերջնակետին» է հասել: Ըստ մեր աղբյուրների՝ իշխանության ներսում շատ մտահոգված են եղել հունիսի 12-ի հավաքով, որը հանգուցալուծվեց բախումով, վիրավորներով ու ձերբակալություններով, բայց իրավապահներին հաջողվել է հասնել ցանկալի նպատակին: Ըստ մեր տեղեկությունների՝ իշխանությունների համար այլեւս վտանգներ չկան, քանի որ արդեն «կոտրել են» շարժման ողնաշարը, իսկ Բագրատ սրբազանն արդեն հուսալքված է, քանի որ, ըստ նրանց, հանրապետությունը չի ցանկանում բիրտ ուժի մասնակիցը դառնալ: Մենք տեղեկացանք նաեւ, որ հայրենի իշխանության ներկայացուցիչներն արդեն պլանավորում են, թե ինչպես են անցկացնելու իրենց ամառային արձակուրդները տարբեր երկրներում. հայրենի նախարարները հերթով արձակուրդի կմեկնեն, իսկ օրենսդիր մարմինն արդեն ավարտում է իր նստաշրջանը: Գուցե արտահերթ նիստեր լինեն, բայց դա չի խանգարի իշխանության անդամներին իրենց արձակուրդը վայելելու համար: Կարելի է ասել, իշխանությունը փորձում է անցնել իր բնականոն կյանքին, նաեւ հանրապետությանը ցույց տալու համար, որ իրենց մոտ ամեն բան կարգին է, իսկ Սրբազանի առաջանորդած շարժումն իրենց չի մտահոգում:

Երեկ իրավապահ համակարգին հրահանգված է եղել ուժեղացված հսկողություն սահմանել բոլորին հայտնի՝ Կոնդի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցում, որտեղ կայացել է քրեական հեղինակություն Սերգեյ Գրիգորյանի՝ «Ֆազի» հոգեհանգիստը: Իրավապահ համակարգը քրեական հետախուզության ողջ կազմով եկեղեցին շրջափակած ու հսկողության տակ է առած եղել: Այս ամենի պատճառներից մեկն այն է, որ սպանությունից անցել է 3 օր եւ այն բացահայտված չէ: Armlur.am-ը գրել էր, որ երեկվա դրությամբ, ըստ նախնական վարկածի, Սերգեյ Գրիգորյանին կյանքից զրկել են վարձու մարդասպաններ, որոնք եղել են երկու հոգի: Նրանք գտնվել են OPEL մակնիշի ավտոմեքենայի մեջ, որը, ինչպես արդեն նշել էինք, գողացված է եղել: Ի դեպ, հայտնել էինք, որ Սերգեյ Գրիգորյանի գործով 2 տարի առաջ կալանավորվել էր դատավոր Արուսյակ Ալեքսանյանը: Բանն այն է, որ 2022 թվականին Կենտրոնի դատարանում միջադեպ էր եղել, ու միջադեպի «հերոսներն» էին կրիմինալ աշխարհում հայտնի Ռուստամ Ստեփանյանը՝ «Չաղ Ռուստամ» մականվամբ եւ Սերգեյ Գրիգորյանը՝ «Ֆազ» մականվամբ: Միջադեպը տեղի էր ունեցել Կենտրոն եւ Նորք-Մարաշ շրջանների ընդհանուր իրավասության դատարանի բակում: «Ֆազի» եւ «Չաղ Ռուստամի» կողմնակիցներն իրար ծեծել էին: Ծեծկռտուքին միջամտել էին ոստիկանության աշխատակիցները, որից հետո «Ֆազը» դիմել էր փախուստի, իսկ «Չաղ Ռուստամը» ավելի ուշ ներկայացել էր ոստիկանություն: Քրեական գործ հարուցվեց, սակայն Ռուստամին չկալանավորեցին, իսկ Սերգեյ Գրիգորյանը կալանավորվեց. ավելի ուշ դատավոր Արուսյակ Ալեքսանյանը նրան ազատ արձակեց՝ 2,5 միլիոն գրավի դիմաց: Իրավապահները դատավորի քայլը համարել էին ապօրինի, եւ Ալեքսանյանը կալանավորվել էր: Ներկայումս դատավորն ազատության մեջ է, սակայն դատարանում քննությունը պաշտոնական լիազորությունների չարաշահման գործով դեռ շարունակվում է: Հավելենք, որ «Ֆազի» սպանության գործով այս պահին բազմաթիվ վարկածներ են քննվում, այդ թվում՝ «Չաղ Ռուստամի» հետ նրա հարաբերությունները:

ԶՐՈՒՅՑ

«ԵԹԵ ՉԿԱՆԽՎԵՐ, ԿԿՐԿՆՎԵՐ ՄԱՐՏԻ 1-Ը». ԿՅՈՒՐԵՂՅԱՆ

ArmLur.am-ը Բաղրամյան պողոտայում կատարված բախումների մասին զրուցել է «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արմենուհի Կյուրեղյանի հետ:

-Տիկին Կյուրեղյան, հունիսի 12-ին Ազգային ժողովի հարցուպատասխանն էր Նիկոլ Փաշինյանի եւ կառավարության հետ, դրան զուգահեռ այստեղ՝ Բաղրամյան եւ Դեմիրճյան խաչմերուկներում, բիրտ ուժ կիրառվեց ցուցարարների, շարժման աջակիցների, մասնակիցների նկատմամբ, եւ օգտագործվեցին նույնիսկ լուսաձայնային նռնակներ: Դուք՝ որպես Ազգային ժողովի ընդդիմադիր պատգամավոր, ինչպե՞ս կմեկնաբանեք այն քայլերը, որոնք կիրառեց իշխանությունը ցուցարարների նկատմամբ, որի արդյունքում 90 եւ ավելի քաղաքացի, վերջին տվյալներով, վիրավոր են եւ դիմել են բուժօգնություն ստանալու համար:

-Ըստ էության, մեր օրենսդրության մեջ էլ է ֆիքսված, որ ցուցարարների նույնիսկ ամենասադրիչ գործողությունները չեն կարող հիմք հանդիսանալ ոչ իրավաչափ ուժի կիրառման ոստիկանության կողմից, եւ երբ մենք Ազգային ժողովում այդ մասին բարձրաձայնում էինք, Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, թե ոստիկանները, ըստ էության, գործողություններ են կատարում օրենքի շրջանակում, դրանով նա ուղերձ հղեց ոստիկանությանը. «Դուք արեք այն ամենը, ինչ պետք է», կարծես ասելով՝ դուք արեք, ես «տեր եմ»:

-Ասում են՝ հենց դահլիճից է զանգահարել նախարարին ու հրահանգ տվել:

-Փաշինյանը հայտարարեց, իբրեւ թե իմ հայտարարությունից հետո դուրս է դուրս եկել, խոսել ԱԱԾ պետի եւ ոստիկանապետի ու ՆԳ նախարարի հետ, ճշտել՝ իմ ասածներն իրականությանը համապատասխանո՞ւմ են, թե՞ ոչ, եւ բացասական պատասխան ստացել. բայց ես ողջամիտ կասկածներ ունեմ, որ նա դուրս եկավ եւ ոստիկաններին հրահանգեց՝ արեք քայլերը ինչպես պատկերացնում եք, «Ես տեր եմ»: Փաշինյանը նման հայտարարություն արեց՝ ի պատասխան իմ հարցին եւ գործընկերներիս մեկնաբանություններին: Իբրեւ թե, ոստիկանությունը գործում է օրենքի շրջանակում, եւ եթե հանկարծ վաղը պարզվի, որ մի բան այն չէ՝ «մենք քննություն կիրականացնենք, եւ ովքեր մեղավոր կլինեն, կպատժվեն»: Նա, սակայն, նախապես արդեն ուղերձը հղել էր. սա, հստակ, վարչապետի կողմից արված հրահանգ էր ներքին գործերի նախարարին կամ ԱԱԾ պետին, որպեսզի ամեն գնով ցուցարարների այս ցասումը դիմադրության առնի, թեկուզ բիրտ ուժի կիրառմամբ:

Եվ բոլորս տեսանք, թե ինչպիսի կոշտ ուժ կիրառվեց քաղաքացիների հանդեպ. մոտ 100 ցուցարար ունենք քննչական կոմիտեներում, որոնց հետ կապված քրեական գործ է հարուցվել, նաեւ ունենք շուրջ 100 վիրավորներ, որոնք դեռ հիվանդանոցում են (խմբ. երեկ) ընդ որում՝ նրանցից մեկի ձեռքի դաստակն ամպուտացված է եւ վիրահատել էին: Վիրավորների կադրերը կան՝ինչպես է մարդկանց գլխից արյուն հոսում, վնասված ձեռքերի, ոտքերի, մարմնի վնասված այլ մասերի կադրեր՝ նույնպես. իսկ Փաշինյանն ասում է՝ այդպիսի բան չկա, սուտ եք խոսում:

Փաստացի, վարչապետն իր հայտարարություններով ապացուցեց, որ «Մարտի 1»-ի իրականացնողն ինքն էր: Նա մարտի 1-ին ասում էր. «սիրտս փառավորում է, երբ ցուցարարները հարվածում են», երեկ էլ իր սիրտը փառավորվում էր, երբ ցուցարարներին էն հարվածում:

-Տիկին Կյուրեղյան, կարո՞ղ էր «Մարտի 1» կրկնվել հունիսի 12-ին, եթե ժամանակին չկանխվեին բախումները:

-Եթե Բագրատ Սրբազանի փոխարեն լիներ մեկ ուրիշը՝ Նիկոլ Փաշինյանի նման մեկը, հաստատ կլիներ «Մարտի 1», եւ դեռ մի բան էլ ավելի լուրջ:

Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

ՀՐԱՀԱՆԳՎԱԾ ՔԱՅԼԵՐ

ՇՏԱՊ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՇԱՑՈՒՄՈՎ ԷՐ ՀԱՄՆՈՒՄ

ArmLur.am-ը երեկ հայտնել էր, որ Բաղրամյան պողոտայում տեղի ունեցած իրադարձությունների հետեւանքով տուժել են նաեւ «Հաղթանակ» կուսակցության նախագահ, խաղաֆային դլանավորող Վիկտոր Մնացականյանը, որը ոտքերի տարբեր աստիճանի վնասվածքներ էր ստացել, տուժել էր նաեւ կուսակցության խաղխորհրդի անդամ Արման Ավետիսյանը, որը ոտքի ծանր վիրավորում էր ստացել:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում երեկ Վիկտոր Մնացականյանը պատմեց, որ թե՛ իր, թե՛ Արման Ավետիսյանի վիճակն արդեն լավ է. «Արմանին այսօր արդեն երկրորդ անգամ վիրակապեցին: Իմն ուղղակի ոտքի եւ մարմնի տարբեր թեթեւ վնասվածքներ են, Արմանի վնասվածքներն են մի քիչ ավելի ծանր, բայց հիմա արդեն լավ է, նա տանն է:

Մենք հաշվի ենք առնում, որ հանրահավաքների ժամանակ նման միջադեպեր կարող են լինել», - ասում է Մնացականյանը՝նկատելով, որ երեկ հանրահավաքի ընթացքում ոստիկանությունը ոչ իրավաչափ միջոցներ է կիրառել. «Եթե կիրառված միջոցները լուսաձայնային էին, ինչու էին հարյուրավոր մարդիկ մարմնական վնասվածքներ ստացել:

Ոստիկանները լուսաձայնային նռնակները պլաստմասե շշերի մեջ էին դրել, որ ճնշումից շիշը պայթի ու մարդկանց ոչ խոր վնասվածք հասցնի:

Նաեւ նշեմ, որ նռնակները հենց հավաքված քաղաքացիների մեջ էին գցում», - պատմում է նա:

Վիկտոր Մնացականյանը նաեւ ուշադրություն է հրավիրում մի հանգամանքի. «Շտապ օգնության կենտրոնական կայանը հավաքից ընդամենը մի քանի մետր հեռավորության վրա է, բայց 20-25 րոպե ուշացումով էին տեղ հասնում:

Ես, երբ Պռոշյան-Բաղրամյան պողոտայում մոտեցա պարեկներին, 10 րոպե խնդրում, համոզում էի, որ շտապ բուժօգնություն կանչեին:

Մի մասն ասում էր՝դա իրենց գործը չէ, մի մասն էլ՝որ արդեն կանչել են, մի քանիսն էլ մոտենում էիր, որ բան խնդրեիր, շրջվում, մեջքով էին կանգնում՝ կարծես իրենց թշնամին լինեինք:

Լինում էր նաեւ, որ մի մեքենայով մի քանի հիվանդ էին տեղափոխում:

Պետք է խիստ նկատողություն հայտարարվի եւ ծառայողական քննություն՝այս դեպքերի մասով:

Իմ աչքով տեսել եմ, այն պահին, երբ հարյուրավոր քաղաքացիներ օգնության կարիք ունեին, շտապօգնություն գլխավոր կայանի մոտ 30-ից ավելի մեքենաներ էին կանգնած, պարեկներն էլ հրաժարվում էին շտանօգնություն կանչել, երբ դիմում ես՝չեն էլ խոսում հետդ. սա ոչ պրոֆեսիոնալության մասին է խոսում»,- մեզ հետ զրույցում պատմեց Վիկտոր Մնացականյանը:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՔՊ-ԱԿԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Կարեն Սարուխանյանը պաշտոնին նշանակվել է 2022 թվականի հուլիսի 6-ին՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համապետական ընտրական ցուցակով:

Կարեն Սարուխանյանը հայտարարագրել է 6 անշարժ գույք՝6 հողամաս, որոնք ձեռք է բերել 2016 թվականին Շիրակի մարզի Աշոցք համայնքում, բոլորը՝բաժնային սեփականությամբ:

Սարուխանյանն այս տարի որեւէ գույք չի հայտարարագրել, սակայն 2022 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի հայտարարագրի համաձայն՝ԱԺ պատգամավորը սույն թվականին ձեռք բերված Գյումրիում գտնվող եւ միանձնյա սեփականությամբ իրեն պատկանող հասարակական նշանակության շինությունը նույն տարում նվիրատվությամբ փոխանցել է կնոջը:

Կարեն Սարուխանյանի՝2022 թվականի հայտարարագրում առկա տվյալների համաձայն՝ նա ունեցել է անհատական բնակելի տուն եւ ավտոտնակ Գյումրիում, սակայն այս տարվա հայտարարագրում այս անշարժ գույքերի մասին խոսք չկա:

Նրա բանկային հաշիվների մնացորդները կազմել են 600 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները՝ 4 մլն դրամ, հաշվետու տարվա եկամուտները՝ 11 մլն 554 հազար դրամ:

Եկամուտներից 9 մլն 847 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմից, իսկ մյուս մասը՝930 հազար դրամը եւ 2 հազար դոլարը վարկեր են ՀՀ բանկերից:

Պատգամավորի ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 17 մլն 625 հազար դրամ:

Հիշեցնենք, որ հունիսի 12-ին՝Ազգային ժողովում 2023 թվականի բյուջեի քննարկման եւ Նիկոլ Փաշինյանի հարցուպատասխանի ընթացքում ստեղծված լարված իրավիճակի արդյունքում բռնկված վեճի ժամանակ, հարվածեց ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Սեյրան Օհանյանին եւ բորբոքեց կռիվը:

Հիշեցնենք, նաեւ, որ Կարեն Սարուխանյանն այն պատգամավորն է, որը, ըստ շրջանառվող տեղեկությունների, ոչ սթափ վիճակում՝ալկոհոլի ազդեցության տակ, իրեն պատկանող ավտոմեքենայով բախվել է բեռնատարի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՊԿ–Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ռուսաստանը կշարունակի աշխատանքը Հայաստանի հետ՝ Երեւանի դիրքորոշումը ՀԱՊԿ-ի վերաբերյալ պարզելու համար, հուսով ենք, որ երկրների փոխհարաբերությունները կշարունակվեն գործընկերության եւ դաշնակցայնության հունով: Այս մասին հայտնել է ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը, տեղեկացնում է «ՌԻԱ Նովոստի»-ն:

«Ինչ վերաբերում է Հայաստանին, մենք կշարունակենք աշխատանքը մեր հայ բարեկամների հետ, մենք կպարզենք նրանց դիրքորոշումը, իհարկե, հուսով ենք, որ ցանկացած պարագայում կպահպանենք գործընկերային եւ դաշնակցային հարաբերությունները», - ասել է Պեսկովը՝ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հայտարարությանը (կապված ՀԱՊԿ-ից Հայաստանի դուրս գալու հետ) ի պատասխան: Պեսկովը նշել է, որ սրանում հաստատ շահագրգռված է Հայաստանը:

«Յուրաքանչյուր երկիր ինքն է որոշում իր առաջնահերթությունները: Մեր առաջնահերթությունները լավ հասկանալի են, մենք հետեւողականորեն պաշտպանում ենք դրանք, եւ այդ գերակայությունները անվտանգության, հավաքական անվտանգության ոլորտում մեզ հետ կիսում են (ՀԱՊԿ) անդամ երկրները», - ասել է ՌԴ նախագահի մամուլի քարտուղարը:

ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ԴԻՄԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ

Հունիսի 12-ին Բաղրամյան-Դեմիրճյան փողոցների խաչմերուկում «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման կազմակերպած բողոքի զանգվածային ակցիայի ընթացքում ոստիկանության կողմից կիրառվեցին հատուկ միջոցներ՝ լուսաձայնային նռնակներ, որի հետեւանքով վնասվել են տասնյակ ցուցարարներ, զանգվածային լրատվական միջոցների (ԶԼՄ) ներկայացուցիչներ՝ լրագրողներ, օպերատորներ, ոստիկաններ:

Առողջապահության նախարարությունը հայտնում է, որ տեղի ունեցած իրադարձությունների հետեւանքով բուժօգնության է դիմել 101 քաղաքացիական անձ եւ ոստիկան:

Ներքին գործերի նախարարությունից ArmLur.am-ին հայտնեցին, որ տուժած վիրավորների թիվը 18 է: Բոլորը բուժօգնություն են ստացել եւ դուրս գրվել:

Ընդհանուր անհրաժեշտ բուժօգնություն ստանալուց հետո՝ դուրս են գրվել 85 հոգի:

Մյուս 16 անձինք ստանում են անհրաժեշտ բուժօգնություն: Ունեն թեթեւ եւ միջին ծանրության վնասվածքներ:

Հիշեցնենք, որ հունիսի 12-ին՝ նույն բախումների ժամանակ, տուժել է ArmLur.am-ի օպերատորը, ում ոտքի վնասվածքով տեղափոխել էին հիվանդանոց. այնուհետեւ համապատասխան ստուգումներ անցնելուց հետո նա դուրս էր գրվել:

ԲԱՐԴ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՄԱՅ, ՈՐ ԷԼ ԵՐԲԵՔ ՉԻ ՄԵԿՆԻ ԲԵԼԱՌՈՒՍ

Խոսելով Հայաստանի եւ ՀԱՊԿ բարդ հարաբերությունների մասին՝ վարչապետը հիշեցրել է Բելառուսի նախագահի հայտնի սկանդալային հայտարարությունը.

«ՀԱՊԿ երկրների ղեկավարներից մեկն ասում է, որ մասնակցել է պատերազմի նախապատրաստմանը, քաջալերել, հավատացել եւ ցանկացել է Ադրբեջանի հաղթանակը: Իսկ դրանից հետո ես գնալու եմ Բելառուսի ղեկավարի հետ ՀԱՊԿ-ի ֆորմատով ինչ-որ բան քննարկելու»,- ասաց Փաշինյանը՝ միաժամանակ թույլատրելով շփումները ԱՊՀ-ի եւ ԵԱՏՄ-ի ներսում:

Հավելենք, որ Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն հանգիստ է արձագանքել Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ նոյեմբերի 23-ին Մինսկում կայանալիք ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի նիստին մասնակցելու մերժմանը: Ըստ Բելառուսի նախագահի խոսնակի՝ Լուկաշենկոն Փաշինյանին առաջարկել է չշտապել, չընդունել հապճեպ որոշումներ, այլ լրջորեն մտածել հաջորդ քայլերի շուրջ, որոնք կարող են ուղղված լինել ապահինտեգրմանը:

Հիշեցնենք, որ ոչ շատ հեռու անցյալում՝ 2023 թվականի դեկտեմբերին, ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր Արամ Հովհաննիսյանն ընդունել է Բելառուսի Հանրապետության ՆԳ նախարարության Պահպանության դեպարտամենտի ներկայացուցիչներին: Հանդիպման ավարտին ոստիկանության պետ Արամ Հովհաննիսյանը պարգեւատրել է պատվիրակության անդամներին:

2020 թվականին Նիկոլ Փաշինյանը, ՀՀ վարչապետ ընտրվելուց հետո, առաջին անգամ Մինսկում մասնակցել է Եվրասիական միջկառավարական խորհրդի հերթական նիստին:

2022 թվականին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն աշխատանքային այցով մեկնել էր Բելառուսի Հանրապետություն: Կառավարության ղեկավարը Մինսկում մասնակցել էր Եվրասիական միջկառավարական խորհրդի հերթական նիստին:

Բացի այս պաշտոնական այցից՝ Փաշինյան-Լուկաշենկո հանդիպումներ եղել են 2018 թվականին Տաջիկստանի մայրաքաղաք Դուշանբեում՝ ԱՊՀ մասնակից պետությունների ղեկավարների խորհրդի հերթական նիստին, 2018 թվականի վերջին Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության Հավաքական անվտանգության խորհրդի նիստին, Սանկտ Պետերբուրգում՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպատոսության նոր շենքի բացման արարողությանը, 2019 թվականին Մոսկվայում՝ Եվրասիական միջկառավարական խորհրդի հերթական նիստին, Բիշքեկում՝ ՀԱՊԿ հավաքական անվտանգության խորհրդի նիստին, Մոսկվայում՝ «Բորիս Ելցինի» անվան նախագահական գրադարանում մասնակցել է Բարձրագույն Եվրասիական տնտեսական խորհրդի հերթական նիստին, Ալմաթիում՝ Եվրասիական միջկառավարական խորհրդի հերթական նիստին եւ այսպես շարունակ:

Փաշինյանի նման կոպիտ հայտարարություններին զուգահեռ՝ Բելառուսում ՀՀ դեսպան Ռազմիկ Խումարյանը կանչվել է Երեւան՝ խորհրդակցությունների:

Հստակ պատճառ, թե ինչու Հայաստանի ղեկավար Նիկոլ Փաշինյանը կտրուկ փորձում է խզել կապերը Բելառուսի ղեկավարության հետ եւս հայտնի չէ: Ըստ քաղաքագետների՝ դա արվում է հայ-ռուսական հարաբերությունների վատացման ֆոնին զուգահեռ, քանի որ հարաբերությունները խզվում են նաեւ ՀԱՊԿ-ի հետ, ըստ այդմ՝ հարաբերությունները աստիճանաբար լարվում են նաեւ անդամ այլ երկրների նկատմամբ եւս: Կարելի է հստակ արձանագրել, որ պատերազմից 4 տարի անց Բելառուսի հայտարարությունները այսօր հիշելն առնվազն պատճառաբանություն է, իսկ հարաբերության խզման արմատներն այլ ուղղություն ունեն:

Հարցական է, թե ինչպես սատացվեց, որ Նիկոլ Փաշինյանը պատերազմական հանցագործությունը, որն իրականացվել էր ադրբեջանաթուրքական տանդեմի նախաձեռնությամբ, կարողացավ ներել եւ մեկնեց Թուրքիա՝ Անկարա, նախագահ Ռեջեփ Էրդողանի երդմնակալության արարողությանը. իսկ Բելառուսի նախագահին այդպես էլ ներել չկարողացավ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼՈՒՍԱՁԱՅՆԱՅԻՆ ՆՌՆԱԿՆԵՐ, ՄԱՐԴԿԱՆՑ ԱՌԵՎԱՆԳՈՒՄ

Հունիսի 12-ին «Տավուշը հանուն հայրենիքի» շարժումը հերթական ակցիան էր իրականացնում Բաղրամյան-Դեմիրճյան խաչմերուկում: Իրավիճակը հսկողության տակ էին պահում ներքին գործերի նախարարության ենթակայության տակ գտնվող ուժային բոլոր կառույցները:

Ուժեղացված հսկողություն էր իրականացվում Ազգային ժողովի բոլոր մուտքերի մոտ, Դեմիրճյան փողոց էին բերվել նաեւ Տավուշի, Կոտայքի, Արագածոտնի մարզերի պարեկային ծառայության ջոկատները:

Ակցիային զուգահեռ՝ Ազգային ժողովում ընթանում էր 2023 թվականի բյուջեի քննարկումը, եւ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հարցուպատասխանը:

Իրավիճակը լարված էր նաեւ Ազգային ժողովում. պատգամավորների վեճին զուգահեռ հնչեցին պայթյուններ, որոնք լսվեցին անգամ ԱԺ դահլիճում:

Ավելի ուշ պարզ դարձավ, որ ՆԳՆ զորքերը կիրառել են լուսաձայնային նռնակներ:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Բաղրամյան պողոտայում «Տավումը հանուն հայրենիքի» շարժման մասնակիցների վրա ոստիկանները կիրառել են երկու հատուկ միջոցներ՝ «Զարյա-2» նռնակը եւ «Զարյա-3»՝ հատուկ կոպիտ նռնակը:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ 2018 թվականի հեղափոխության ժամանակ ՀՀ առողջապահության նախարարությունը թույլ չի տվել ոստիկանությանը քաղաքացիների վրա կիրառել «Զարյա 3» հատուկ նռնակը, մինչդեռ հատուկջոկատայիններրը այն կիրառել են: Ուստի հարց է առաջանում ՀՀ առողջապահության նախարարությունից եղե՞լ է թույլտվություն, թե՞ ոչ:

Մինչեւ այս գործողությունները ԱԱԾ-ն հայտարարություն էր տարածել. «ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը սահմանադրական կարգի պահպանման իր գործառույթի շրջանակում հորդորում է՝ 2024 թվականի ապրիլի 4-ից սկիզբ առած «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման աջակիցներին պահպանել օրինականությունը եւ չոտնձգել իրավակարգի դեմ: Հաշվի առնելով ազգային անվտանգության ծառայության՝ սահմանադրական կարգը ցանկացած ոտնձգությունից պահպանելու առաքելությունը՝ վերահաստատում ենք, որ ոչ իրավաչափ ցանկացած վարքագիծ չեզոքացվելու է օրենքով սահմանված ողջ գործիքակազմի կիրառմամբ»:

Բախումների ընթացքում առեւանգվել էր Սուրեն Պետրոսյանը: Ականատեսների վկայությամբ՝ քաղաքացիական հագուստով 4 անձ նրան տարել են անհայտ ուղղությամբ: Մինչեւ այս ժամը Սուրեն Պետրոսյանից որեւէ լուր չկա:

Բախումների ընթացքում վնասվել եւ բուժօգնության են դիմել 98 քաղաքացիական անձ եւ ոստիկան: 66 հոգի, անհրաժեշտ բուժօգնություն ստանալուց հետո, դուրս է գրվել: 32 պացիենտ շարունակում է բուժօգնություն ստանալ:

Բուժօգնության դիմած անձինք ստացել են տարբեր աստիճանի վնասվածքներ՝ թեթեւ, ծանր, միջին ծանրության: Քաղաքացիներից մեկի ձեռքը դաստակից ամպուտացվել է:

Բախումների ընթացքում բերման է ենթարկվել 98 քաղաքացի:

Բախումներից հետո Բագրատ Սրբազանի առաջնորդած երթը քայլեց դեպի Կառավարության շենք:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

«ՖԱԶ»-Ի ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

ԿՅԱՆՔԻՑ ԶՐԿՈՂՆԵՐԸ ԵՐԿՈՒՄՆ ԵՆ ԵՂԵԼ

2 or է անցել քրեական հեղինակություն Սերգեյ Գրիգորյանի՝ «Ֆազ»-ի սպանությունից, սակայն այս պահի դրությամբ որեւէ կասկածյալ չկա:

Այս պահի դրությամբ, ըստ նախնական վարկածի, Սերգեյ Գրիգորյանին կյանքից զրկել են վարձու մարդասպաններ, որոնք եղել են երկու հոգի: Նրանք գտնվել են OPEL մակնիշի ավտոմեքենայի մեջ, որը, ինչպես արդեն նշել էինք, գողացված է եղել: Երեկ Սերգեյ Գրիգորյանի հոգեհանգիստն էր, իսկ սպանությունը դեռ բացահայտված չէ:

Իրավապահ համակարգում քննարկում է եղել, որ քրեական հեղինակություն Սերգեյ Գրիգորյանին՝ «Ֆազ»-ին սպանողը բավականին պատրաստված է եղել: Մասնավորապես նա Սերգեյ Գրիգորյանին՝ «Ֆազին» սպանելու է գնացել գողացված մեքենայով: Ի դեպ, Սերգեյ Գրիգորյանի գործով 2 տարի առաջ կալանավորվել էր դատավոր Արուսյակ Ալեքսանյանը:

Մասնավորապես, գրել էինք, որ ArmLur.am-ին հասած լուրերի համաձայն՝ դատավոր Ալեքսանյանը քրեական հեղինակության մասով կայացրել է այնպիսի ակտ, որով նրան ազատ էին արձակել 2,5 միլիոն գրավի դիմաց, ինչը իրավապահ համակարգում համարել էին պաշտոնական լիազորությունների չարաշահում ու դատավորը մինչ օրս կանգնած է դատարանի առաջ: Նրա սպանության գործով այս պահին բազմաթիվ վարկածներ են քննվում այդ թվում՝ «Չաղ Ռուստամի» հետ նրա հարաբերությունները:

Հիշեցնենք, որ Shamshyan. com-ը հայտնել էր, որ հունիսի 11-ի գիշերը կրակոցներ են հնչել Աջափնյակ վարչական շրջանում, ինչի հետեւանքով սպանվել է քրեական հեղինակություն Սերգեյ Գրիգորյանը՝ «Ֆազը»: Այս պահին ողջ իրավապահ համակարգը ջանքեր է գործադրում սպանությունը բացահայտելու համար:

Իսկ ինչ սկանդալային պատմության մեջ էր նախկինում հայտնվել քրեական հեղինակություն Սերգեյ Գրիգորյանը՝ «Ֆազը»:

2022 թվականին Կենտրոնի դատարանում միջադեպ էր եղել, ու միջադեպի հերոսները կրիմինալ աշխարհում հայտնի Ռուստամ Ստեփանյանն էր՝ «Չաղ Ռուստամ» մականվամբ եւ Սերգեյ Գրիգորյանը՝ «Ֆազ» մականվամբ:

Միջադեպը տեղի էր ունեցել Կենտրոն եւ Նորք-Մարաշ շրջանների ընդհանուր իրավասության դատարանի բակում: «Ֆազի» եւ «Չաղ Ռուստամի» կողմնակիցներն իրար ծեծել էին: Ծեծկռտուքին միջամտել էին ոստիկանության աշխատակիցները, որից հետո «Ֆազը» դիմել էր փախուստի, իսկ «Չաղ Ռուստամն» ավելի ուշ ներկայացել էր ոստիկանություն:

Քրեական գործ հարուցվեց, սակայն Ռուստամին չկալանավորեցին, իսկ Սերգեյ Գրիգորյանը կալանավորվեց, որին ավելի ուշ ազատ արձակեցին:

Հետագայում պարզվել էր, որ Սերգեյ Գրիգորյանը՝ «Ֆազը», դատարանի դիմաց եղել էր այն պարզ պատճառով, որ իր հարազատ եղբոր՝ Գրիգորի Գրիգորյանի վերաբերյալ քրեական գործով դատական նիստին պետք է ներկա լիներ: Դատական նիստը նշանակված էր եղել այդ ժամին, դրա համար էլ ներկա էր գտնվել դատարանի բակում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԻՆՉՆ ԷՐ ՊԱՏՃԱՌԸ

ՆԱԽԿԻՆ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ ԵՂԲՈՐՆ ԵՆ ԿՅԱՆՔԻՑ ԶՐԿԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Արմավիրի մարզում Ամբերդ գյուղի միջնակարգ դպրոցի մոտ սպանվածը Ամբերդի նախկին գյուղապետ Մանվել Բաբայանի եղբայրն է՝ Արծրուն Բաբայանը:

Shamshyan.com-ը գրել էր, որ հունիսի 12-ին, կրակոցներ են հնչել Արմավիրի մարզում եւ տեղի է ունեցել սպանություն: Ժամը 18:00-ի սահմաններում ՀՀ Ներքին գործերի նախարարության Ոստիկանության Արմավիրի մարզային վարչությունում եւ ոստիկանության Վաղարշապատի բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Ամբերդ գյուղի միջնակարգ դպրոցի մոտ կրակոցներ են հնչել եւ կա վիրավոր:

Մինչ ոստիկանները ու պարեկները կժամանեն դեպքի վայր, «Վաղարշապատ» բժշկական կենտրոնից ոստիկանության Վաղարշապատի բաժին ահազանգ է ստացվում, որ «հրազենային վիրավորում» ախտորոշմամբ շտապօգնության բժիշկների հերթապահ խումբը իրենց մոտ է տեղափոխել մի քաղաքացու, ով գիտակցության չգալով մահացել է:

Ոստիկանները պարզել են, որ մահացածը Ամբերդ գյուղի բնակիչ 60-ամյա Արծրունի Բ.-ն է, ով հիվանդանոց է տեղափոխվել Ամբերդ գյուղի միջնակարգ դպրոցի մոտից:

Այսօր ՆԳՆ-ն հայտնեց, որ միջոցառումների արդյունքում ամբերդցի 43-ամյա տղամարդը էջմիածին քաղաքի Անդրանիկի թաղամասում հայտնաբերվել, ձերբակալվել եւ տեղափոխվել է ոստիկանության Վաղարշապատի բաժին, որտեղ անցկացված բացատրական աշխատանքի շնորհիվ խոստովանել է արարքը: Ձեռնարկվում են միջոցառումներ՝ հանցագործության գործիք ինքնաձիգը հայտնաբերելու ուղղությամբ: Կազմված փաստաթղթերն ուղարկվել են Վաղարշապատի քննչական բաժին:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Ազգային ժողովը շարունակում է քննարկել Վճռաբեկ դատարանի դատավորի թեկնածուի ընտրության հարցը:

ՀՀ Սահմանադրության 166-րդ հոդվածի 3-րդ մասի եւ ԱԺ Կանոնակարգ սահմանադրական օրենքի 143-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի դատավորի թափուր տեղում ընտրելու համար առաջադրել է Արմեն Դանիելյանի, Ռուբիկ Մխիթարյանի եւ Մանվել Շահվերդյանի թեկնածությունները:

Ներկայացված 3 թեկնածուից Ազգային ժողովը պետք է ընտրի Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի դատավորի թեկնածու:

ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ԴԻ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

Հունիսի 13-ին մարտաֆիլմ հիշեցնող կրակոցներ են հնչել Երեւանում: Ժամը 00:30-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանությունում եւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Երեւան քաղաքի վարչությունում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Նորագավիթ 1-ին փողոցում հնչել են կրակոցներ, եւ կա զոհ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ոստիկաններն ու պարեկները դեպքի վայրում հայտնաբերել են երիտասարդ տղայի դի, 30-ից ավելի ինքնաձիգից կրակված պարկուճներ, գնդակներ, արնանման հետքեր:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ սպանվածը Միեր Խաչատրյան է, որը ապրիլյան պատերազմի մասնակից է եղել:

Ըստ նախնական վարկածի՝ տարբեր խնդիրներ են եղել կողմերի միջեւ, ավելին՝ սպանվածն ու սպանողը ծանոթներ են եղել:

Ինչեւէ հետեւենք քննության ընթացքին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 12-ից 13-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 61 դեպք, որից 1-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄԱՐԶՊԵՏԻ ԱՆՀԵԹԵԹ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք արել՝նրան հարցնելով. «Ուսուցիչների կամավոր ատեստավորման գործընթացը սկսվելուց հետո՝ մինչեւ այժմ, Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների քանի՞ ուսուցիչ է մասնակցել դրան, նրանցից քանիսը ինչ արդյունքներ են ունեցել: Այս հարցի պատասխանն ունենալու համար Ձեր ենթակա հանրակրթական դպրոցների տնօրեններից ինչո՞ւ չեք պահանջել ատեստավորմանը մասնակցած ուսուցիչների թվերը, դա Ձեզ պետք չէ՞»: Մարզպետ Ղալումյանը նախկինում այս հարցին պատասխանել էր, թե կամավոր ատեստավորման մասնակիցների ընդհանուր թիվը մարզպետարանում չգիտեն, քանի որ դա կամավոր գործընթաց է: Հունիսի 10-ին մարզպետարանից ստացված պատասխանում նշված է.«Տավուշի մարզպետի աշխատակազմին անհրաժեշտ եւ առկա տեղեկատվության համաձայն՝ Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններից կամավոր ատեստավորմանը մասնակցել են 170 ուսուցիչ: Նրանցից 50-ն արձանագրել է 60-70%, 120-ը՝70-100% արդյունք»: Բրավո, ուրեմն, ըստ Տավուշի մարզպետարանի տվյալների՝, Տավուշի մարզում կամավոր ատեստավորմանը մասնակցել է ընդամենը 170 ուսուցիչ, բոլորն էլ 60-100 տոկոսանոց արդյունք են ունեցել: Բարձրագույն կրթություն չունեցող 55 ուսուցչի ազատել են Տավուշի հանրակրթական դպրոցներից, նրանց մի մասը, աշխատանքը չկորցնելու համար, մասնակցել է կամավոր ատեստավորմանը, սակայն դրական արդյունք չի ունեցել: 170-ը ատեստավորումից դրական արդյունք ցուցաբերած ուսուցիչների թիվն է, իսկ ատեստավորմանը մասնակցածների ընդհանուր թիվը շատ անգամ ավելի է: Կարծում ենք, որ մարզպետ Հայկ Ղալումյանը լավ գիտի կամավոր ատեստացիային մասնակցած մարզի հանրակրթական դպրոցների ուսուցիչների ընդհանուր թիվը, եւ այն ուսուցիչների քանակը, որոնք ատեստացիայից բացասական արդունքներ են ունեցել, քանի որ ատեստացիայի «խուճուճ» թեստերից «կտրված» ուսուցիչների քանակը շատ մեծ է, ատեստացիայի գործընթացը՝ ձախողված, ուստի Հայկ Ղալումյանը միայն ատեստացիայից դրական արդյունքներ ունեցողների թվերն է հայտնել: Մարզպետը մեզ անհեթեթ պատասխան է ուղարկել:

«ՀՔՈՐ» ԱՔԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Ն. Փաշինյանի որոշմամբ 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ դարձած Հայկ Ղալումյանը մայիսի 9-ին ֆեյսբուքյան իր էջում տեղադրել է այս գրառումը. «Մեր պատասխանը՝ Բագրատին: ՀՀ ընտրված վարչապետ Նիկոլ Փաշինյան: Կեցցե՛ժողովրդավար ու ինքնիշխան Հայաստանի Հանրապետությունը: ՀՀ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյան»:

Գրվածում «ժողովրդավար ու ինքնիշխան Հայաստանի Հանրապետությունը» անհաջող կատակի է նման:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՄՏԱՀՈԳԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՅՑ՝ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես ավելի վաղ տեղեկացրել ենք, Մարդու իրավունքների պաշտպանը եւ աշխատակազմի ներկայացուցիչները հունիսի 12-ին այցեր են իրականացրել ոստիկանության բաժիններ եւ բժշկական հաստատություններ, հանդիպել բուժօգնություն ստացող հավաքի մասնակիցներին եւ Ոստիկանության ծառայողներին:

Առանաձնազրույցների ընթացքում ինչպես հավաքի մասնակիցները, այնպես էլ ոստիկանության ծառայողները պաշտպանին են ներկայացրել խիստ մտահոգիչ տեղեկություններ: Մասնավորապես, հավաքի որոշ մասնակիցներ նշել են, որ իրենց նկատմամբ Ոստիկանության ծառայողերի կողմից անհամաչափ ուժ է կիրառվել այն պայմաններում, երբ իրենք արդեն իսկ գտնվել են Ոստիկանության ծառայողների հսկողության ներքո: Ըստ ներկայացված պնդումների՝ նշված բռնի գործողությունները կրել են շարունակական բնույթ, պայմանավորված չեն եղել անձանց բերման ենթարկելու անհրաժեշտությամբ, ինչպես նաեւ ուղեկցվել են ոստիկանության ծառայողների կողմից անձանց հասցեին հնչեցվող վիրավորանքներով: Պաշտպանը նշված հանգամանքը անթույլատրելի եւ դատապարտելի է համարում:

Դրա հետ մեկտեղ խիստ մտահոգիչ են բժշկական օգնություն ստացող ոստիկանության ծառայողների ներկայացրած տեղեկությունները՝ հավաքի մասնակիցների կողմից իրենց ուղղությամբ տարատեսակ առարկաներ նետելու վերաբերյալ, ինչի հետեւանքով ծառայողները ստացել են տարբեր մարմնական վնասվածքներ:

Պաշտպանը եւս մեկ անգամ ընդգծում է, որ ոստիկանության կողմից անհամաչափ ֆիզիկական ուժի կիրառման յուրաքանչյուր դեպք պետք է անհապաղ ստանա պատշաճ իրավական գնահատական՝ նման դեպքերի շարունակականությունը բացառելու նպատակով:

Պետք է հատուկ քննարկման առարկա դառնա նաեւ այն հարցը, թե արդյոք հատուկ միջոցները կիրառվել են սահմանված չափանիշների եւ կարգի պահպանմամբ:

Պաշտպանն իր մտահոգությունն է հայտնում նաեւ այն փաստի կապակցությամբ, որ այս իրադարձությունների ընթացքում վնասվածքներ են ստացել իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնող զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ: Մարդու իրավունքների պաշտպանը բազմիցս է ընդգծել զանգվածային լրատվության միջոցների առանցքային դերակատարությունը ժողովրդավարական հասարակությունում, պահանջել է նրանց անխոչընդոտ մասնագիտական գործունեության անհրաժեշտ երաշխիքների ապահովում: Առանցքային է վերը նշված գործերով պատշաճ քննության իրականացումը:

Պաշտպան Անահիտ Մանասյանը խիստ դատապարտում է տեղի ունեցածը՝ կրկին ընդգծելով, որ անթույլատրելի է որեւէ պարագայում իրավասու մարմինների կողմից անհամաչափ ուժի գործադրումը: Պաշտպանը հորդորում է ոստիկանությանը ցուցաբերել զսպվածություն եւ բացառել անհամաչափ ուժի կիրառման ցանկացած դրսեւորում: Ուժի կիրառումը հնարավոր է բացառապես օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում՝ համաչափությանը վերաբերելի չափանիշների պահպանմամբ:

Միեւնույն ժամանակ, հավաքի կազմակերպիչները եւ մասնակիցները, իրենց հերթին, պետք է ցուցաբերեն զսպվածություն, պահպանեն հավաքի խաղաղ բնույթը եւ զերծ մնան իրավիճակի սրման ցանկացած փորձից:

Արձանագրված բոլոր դեպքերը ներկայում ամփոփվում են պաշտպանի աշխատակազմում եւ քննության առարկա դարձնելու նպատակով կներկայացվեն ՀՀ գլխավոր դատախազություն:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ ԿԱՆՑԿԱՑՎԻ

Հունիսի 18-21-ը Երեւանում, Աշտարակում եւ Մեծամորում կանցկացվի «Ժամանակակից ֆիզիկա. հանրամատչելիացման եւ ուսուցման հիմնախնդիրներ ու լուծումներ» խորագիրը կրող համաժողովը:

Գիտաժողովի բացումը տեղի կունենա Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայում հունիսի 18-ին: Նախատեսված են զեկուցումներ Ֆիզիկայի զարգացման ժամանակակից միտումները, Աստղաֆիզիկան այսօր, Փորձարարական ֆիզիկայի զարգացման հիմնական ուղղությունները, Լազերային ֆիզիկա թեմաներով:

Հունիսի 19-ին գիտաժողովի աշխատանքները կշարունակվեն Աշտարակի ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում:

Այստեղ բացի զեկուցումներից նախատեսված է նաեւ փորձարարական մաս:

Հունիսի 20-ին աշխատանքները կշարունակվեն Մեծամորում տեղակայված Հայաստանի ատոմային էլեկտրակայանում: Համաժողովի մասնակիցների համար ատոմակայանի մասնագետների կողմից կներկայացվեն զեկուցումներ ատոմային եւ միջուկային ֆիզիկայի վերաբերյալ: Մեծամորի ատոմակայանի աշխատանքային ողջ ցիկլը կուղեկցվի էքսկուրսիաներով եւ ցուցադրումներով:

Աշխատանքային օրը կավարտվի ատոմակայանի ղեկավարության հետ հանդիպմամբ:

Գիտաժողովի վերջին օրը՝ հունիսի 21-ին, աշխատանքները կիրականացվեն Երեւանում՝ Հայաստանի Հանրապետության ԳԱԱ Ֆիզիկական պրոբլեմների ինստիտուտում:

Զեկուցումները կվերաբերեն քվանտային ֆիզիկային ու ավագ դպրոցում վերջինիս հիմունքների դասավանդմանը: Համաժողովի մասնակիցները կլինեն ինստիտուտի լաբորատորիաներում, հնարավորության սահմաններում ըստ նախասիրության կծանոթանան փորձարարական տեղակայանքներին: Ինստիտուտի տնօրեն Վ. Քոչարյանը ֆիզիկայի ուսուցիչներին կծանոթացնի ինստիտուտի պատմությանն ու ձեռքբերումներին:

4-օրյա աշխատանքների արդյունքների ամփոփումից հետո մասնակիցներին կշնորհվեն հավաստագրեր:

Մասնակիցների տեղափոխումը Աշտարակ եւ Մեծամոր իրականացվում է ՀՀ ԳԱԱ նախագահության շենքի մոտից՝ կենտրոնացված ձեւով: Մասնակիցների սնունդը աշխատանքային բոլոր օրերին կազմակերպվում է տեղում:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 8 պատահար. 16 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՊԱՇՏՈՆԱՊԵՍ

ՀՀ-Ն ՄԻԱՑԱՎ ՆԱՍԱ-Ի ԱՐՏԵՄԻՍ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻՆ

Արտեմիսի համաձայնագիրը ստորագրվել է հունիսի 12-ին Վաշինգտոնում՝ ՆԱՍԱ-ի գլխամասում: Հայաստանը ներկայացրել է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Մխիթար Հայրապետյանը, միջոցառմանը մասնակցել է նաեւ ԱՄՆ-ում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Լիլիթ Մակունցը:

Բացման խոսքում ՆԱՍԱ-ի ղեկավար Բիլ Նելսոնը ջերմորեն ողջունել է Արտեմիսի համաձայնագրին միանալու Հայաստանի որոշումը՝ ընդգծելով գիտության, տիեզերական հետազոտության, աստղագիտության ոլորտներում Հայաստանի՝ պատմականորեն արձանագրած մեծ նվաճումները:

Նախարար Հայրապետյանը, ընդգծելով ՀՀ-ի եւ Միացյալ Նահանգների երկարամյա գործընկերությունը, նշել է, որ այս իրադարձությունը մեծ քայլ է երկու երկրների միջեւ գիտության, մասնավորապես, տիեզերական հետազոտության ոլորտում համագործակցության ընդլայնման համատեքստում:

«Բարդ ժամանակները մեզ ստիպում են փնտրել նոր հնարավորություններ, գտնել նորարար լուծումներ՝ մեր հայացքը ուղղելով դեպի վեր՝ Տիեզերք, որտեղ չկան սահմաններ. երազելու, մեծ երազանքներն իրականացնելու համար այն բացառիկ հնարավորություն է: Մարդու՝ Լուսին վերադարձի ու Լուսնից այն կողմ ճանապարհորդության մասին այս նախաձեռնությանը միանալով՝ Հայաստանը դարձավ տիեզերքի կայուն եւ խաղաղ հետազոտության մեծ տիեզերական ընտանիքի անդամ», - նշել է Մխիթար Հայրապետյանը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՇԱՆՈՒՑՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպիչ «Ֆլորես Աճուրդի տուն» ՍՊԸ-ի կողմից իրականացվող բոլոր այն անշարժ գույքերի աճուրդները, որոնց աճուրդային վաճառքի ավարտը սահմանվել էր մինչեւ 2024թ.-ի հուլիսի 1-ը, երկարաձգվում են մինչեւ 2024թ.-ի դեկտեմբերի 30-ը ներառյալ: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (011) 52-61-85 կամ այցելել բորսա՝ք. Երեւան, Սայաթ-Նովա 40, 82/31 հասցե, ժամը 9:30-17:00:

2) ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՇԱՆՈՒՑՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպիչ «Բի Էս Թի» ՍՊԸ-ի կողմից իրականացվող բոլոր այն անշարժ գույքերի աճուրդները, որոնց աճուրդային վաճառքի ավարտը սահմանվել էր մինչեւ 2024թ.-ի հուլիսի 1-ը, երկարաձգվում են մինչեւ 2024թ.-ի դեկտեմբերի 30-ը ներառյալ: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (011) 56-45-13 կամ այցելել բորսա՝ք. Երեւան, Սայաթ-Նովա 40, 82/31 հասցե, ժամը 9:30-17:00:

ԲԱՑ ՆԱՄԱԿ՝ «ՖԼԱՅ ԱՐՆԱ»-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՑ

ՉԻ ՎՃԱՐԵԼ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐԸ

Ավիաընկերության աշխատակիցների կողմից գրված բաց նամակում մասնավորապես ասված է. «Ֆլայ Արնա ավիաընկերությունը իր գործունեության կարճ ժամանակահատվածի ընթացքում հասցրել էր ձեռք բերել ուղեւորների վստահությունը՝ ցուցաբերելով բարձր ցուցանիշներ մի շարք ոլորտներում: «Ֆլայ Արնա» ավիաընկերությունը գործող հայկական ավիաընկերություններից միակն էր, որը հաջողությամբ անցել էր Օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (IATA) գործառնական անվտանգության աուդիտը (IOSA) եւ ստացել համապատասխան սերտիֆիկատ: Իր գործունեության ողջ ընթացքում ավիաընկերության OTP՝ (On time performance) չվերթները, ըստ չվացուցակի իրականացման ցուցանիշի, եղել են 95-98%: Ավիաընկերության աշխատակիցների համար անհայտ պատճառներով որոշում կայացվեց դադարեցնել ավիաընկերության գործունեությունը:

Ս.թ. հունվարի 16-ին ավիաընկերությունն իրականացրեց վերջին չվերթը, իսկ ս.թ. մարտի 19-ին ավիաընկերության աշխատակիցները ծանուցում ստացան այն մասին, որ ավիաընկերությունը դադարեցնում է իր գործունեությունը: Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով եւ 115-րդ հոդված 1-ին կետով՝ ավիաընկերությունը տեղեկացրեց աշխատակիցներին, որ ս.թ. մայիսի 19-ին լուծարվելու են «Ֆլայ Արնա»-ի եւ աշխատակիցների միջեւ կնքված պայմանագրերը: Միեւնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ ԱՕ 129-րդ հոդվածի 1ին կետը, ընկերությունը պարտավորվեց նաեւ վճարել արձակման նպաստ՝ մեկ ամսվա միջին աշխատավարձի չափով:

Չնայած վերոգրյալին՝ ավիաընկերության աշխատակիցներին չի վճարվել ս.թ. ապրիլ եւ մայիս ամիսների աշխատավարձը, ինչպես նաեւ արձակման նպաստը: Աշխատակիցները բազում անգամ դիմել են ավիաընկերության բաժնետերեր հանդիսացող «Հայաստանի հետաքրքրությունների պետական ֆոնդ» ՓԲԸ-ին (ԱՆԻՖ) եւ «Էյր Արաբիա» ԲԲԸ-ին՝ որպես «Ֆլայ Արնա» ավիաընկերությունը կառավարող ընկերություն:

Մանրամասները՝ ստորեւ.

Մայիս ամսվա ընթացքում աշխատակիցները 3 անգամ այցելել են ԱՆԻՖ՝ հանդիպումներ ունենալով ընկերության ժամանակավոր պաշտոնակատար Տիգրան Ղազարյանի հետ: Հանդիպումների ընթացքում խոստացվել էր ապահովել հարցի լուծումը:

Մայիս ամսվա ընթացքում աշխատակիցները այցելել են ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ հանդիպում ունենցել փոխնախարար Նարեկ Տերյանի հետ, ով խոստացավ նույն օրվա ընթացքում հաղորդել խնդրի շուրջ զարգացումների վերաբերյալ:

Աշխատակիցները նամակներով դիմել են «Ֆլայ Արնա» ավիաընկերության կառավարող ընկերություն «Էյր Արաբիայի» ղեկավար մարմիններին: Պատասխան նամակներում «Էյր Արաբիա» ավիաընկերության ներկայացուցիչները առաջարկել են դիմել ԱՆԻՖ, քանի որ իրենք այլեւս չունեն իրավասություն՝ հանդես գալու «Ֆլայ Արնա» ավիաընկերության անունից: Մյուս նամակում «Էյր Արաբիա» ավիաընկերության ներկայացուցիչը հայտնում է, որ ԱՆԻՖ-ը շարունակաբար լուծում չի գտնում եւ համաձայնություն չի տալիս ընկերության լուծարման առաջարկվող սխեմային:

Ս.թ. հունիսի 03-ին ավիաընկերության աշխատակիցները նամակով դիմել են ՀՀ Վարչապետ Ն. Փաշինյանին, սակայն նամակը վերահասցեավորվել է «Պետական գույքի կառավարման կոմիտե»-ին եւ մինչ օրս չկա պատասխան:

Այսպիսով, յուրաքանչյուր կողմը հանդես է գալիս իր պատճառաբանություններով՝ նշելով, որ հարցի լուծումը կախված է մյուս կողմից: Արդյունքում, ավելի քան 80 աշխատակիցների ընտանիքներ այս պահին գտնվում են ֆինանսական ճգնաժամային իրավիճակում՝ ունենալով բազմաթիվ բանկային պարտավորություններ»:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

ԳՆԱՃԸ ՏԱՐԵՎԵՐՋԻՆ՝ ԿԲ ԿԱՆԽԱՏԵՍՄԱՄԲ

Հայաստանի կենտրոնական բանկը կանխատեսում է, որ 2024-ի վերջին գնաճը կլինի 1.5-1.7 տոկոսի միջակայքում:

Այս մասին ասաց Կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյանը խորհրդարանում ԿԲ-ի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդման ներկայացմանը:

«2024 թվականի անցած 5 ամիսների ընթացքում Հայաստանում ցածր գնաճային միջավայրը պահպանվել է: 2024-ի մայիսին 12-ամսյա գնաճը կազմել է 0.3 տոկոս, ինչը զգալիորեն ցածր է մեր միջնաժամկետ նպատակային ցուցանիշից», - ասաց ԿԲ նախագահը:

Գալստյանը դա հիմնականում պայմանավորեց արտաքին հատվածից փոխանցվող գնանկումային ազդեցություններով: Ներմուծված պարենային ապրանքները գները նվազել են:

12-ամսյա բնականոն գնաճը դեռեւս գտնվում է բացասական տիրույթում:

Նվազել է արտաքին պահանջարկի հետ կապ ունեցող ծառայությունների գնաճը՝ արտահայտելով արտաքին պահանջարկի աճի դանդաղման միտումները: Մինչդեռ արտագնա զբոսաշրջության հետ կապված ծառայությունների, այդ թվում՝ օդային տրանսպորտի եւ միջազգային հանգստի կազմակերպման ծառայությունների գնաճը շարունակում է պահպանվել բարձր մակարդակում:

«Դրամավարկային քաղաքականության ծրագրում ներկայացվող սցենարների համաձայն՝ 2024-ի կարճաժամկետ հորիզոնում գնաճը կպահպանվի նպատակային ցուցանիշից ցածր մակարդակում: Տարեվերջին գնաճը կլինի 1.5-1.7 տոկոսի միջակայքում», - ասաց ԿԲ նախագահը:

2023-Ի ՀՈՒՆՎԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ՀՆԱ-Ն

Էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանն ԱԺ-ում արտահերթ ելույթում նշել է, որ Կառավարության տնտեսական քաղաքականության առանցքային նպատակն է մրցունակ ու բարձր արտադրողականություն ունեցող տնտեսության ձեւավորումը, որը կնպաստի ինքնիշխան ու դիմակայուն պետության շարունակական առաջընթացին: Այս համատեքստում կարեւորվել է մարդկային ռեսուրսների զարգացման համար անհրաժեշտ եւ բավարար տնտեսական, առողջապահական, կրթական անվտանգային պայմանների ապահովումը:

Ըստ նախարարի՝ 2023 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՆԱ-ն կազմել է ավելի քան 9,5 տրիլիոն ՀՀ դրամ՝ աճելով 7,5 տոկոս: ՀՆԱ-ի աճին նպաստել են տնտեսության մի շարք ճյուղերում գրանցված ավելացված արժեքների աճերը: Տնտեսական աճի միտումը շարունակվել է նաեւ 2024 թվականի առաջին եռամսյակում՝ կազմելով 9,2 տոկոս: Արժույթի միջազգային հիմնադրամի տվյալների համաձայն՝ ՀՆԱ-ի աճի ցուցանիշով 2023 թվականին Հայաստանը 191 երկրների շարքում զբաղեցրել է չորրորդ տեղը: Նախարարության ֆինանսական կատարողականը հաշվետու տարում կազմել է 95,9 տոկոս:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԲԱԿՈՒՆՑ 125

ՄԵՐ ԱՐՁԱԿԻ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Մեծանուն գրող, անվանի արձակագիր Ակսել Բակունցի ծննդյան 125-ամյակի առթիվ մի խումբ գրողներ, մշակույթի ոլորտի ներկայացուցիչներ հունիսի 13-ին ծաղիկներ խոնարհեցին գրողի հուշակոթողի մոտ, որը տեղադրված է Երեւանում՝ այն տան առաջ, որտեղ 1927 թվականից մինչեւ 1936 թվականը աղրել եւ ստեղծագործել է Ակսել Բակունցը:



Հայաստանի գրողների միության քարտուղար Նորեկ Գասպարյանն ասաց՝ շատ կարեւոր է, երբ այսօրվա գրողը զգում է, թե ինչպես են սիրում Բակունցին: «Արձակի վերաբերյալ իմ սկզբունքները, մոտեցումները փոխվեցին Թումանյանի «Գիքորը», Չարենցի «Երկիր Նաիրի» եւ Բակունցի «Ալպիական մանուշակ» ստեղծագործությունների շնորհիվ: Առանց երկմտելու կարող եմ ասել, որ Բակունցը մեր գրականության, մեր արձակի գրական արժանապատվությունն է խորհրդանշում: Ավաղ, այսօր էլ «գունավոր բզեզին մանուշակը ճոճք է թվում, իսկ աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան»»,-շեշտեց Գասպարյանը:

Եղիշե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի գրական բաժնի ավագ գիտաշխատող, բանաստեղծ, արձակագիր Գոհար Գալստյանն էլ նշեց, որ առավոտյան սոցիալական հարթակում հրապարակել է Ակսել Բակունցի «Աղոթք»-ը, որը Բակունցը գրել է 1917-1918 թվականներին Արդահանի կռիվներին՝ Սարդարապատի ճակատամարտին մասնակցելուց հետո: «Այդ աղոթքն այսօր էլ թող մեզ պահապան լինի, որովհետեւ ամեն ինչ մաշկի վրա զգացած, ապրած, իր հայրենիքը, հողը զգացող անհատականության, մեծի խոսքը բացառիկ է: Պատահական չէ, որ Բակունցը նաեւ անցել է հոգեւոր դպրոց՝ սովորելով Գեւորգյան ճեմարանում, հետագայում Թիֆլիսում տեխնիկական գիտություններ է ուսումնասիրել, Խարկովի գյուղատնտեսական ինստիտուտն է ավարտել, դասավանդել է դպրոցում: Նա բոլոր առումներով կյանքը շոշափել է, իսկ նրա պոետական ոգին բացառիկ էր: Բակունցի «Ալպիական մանուշակ»-ը, «Խոնարհ աղջիկ»-ը, «Ծիրանի փողը», «Մթնաձոր»-ը դիպել են բոլորիս հոգուն եւ մշտապես լինելու են մեր գրականության գանձարանի գոհարները», - շեշտեց Գալստյանը:

Նա կարծում է՝ գրողի 125-ամյակը առիթ է բացելու ու վերընթերցելու նրա ստեղծագործությունները: «Բակունցի գործերը բեմադրվում են, նկարահանվում են, վերարծարծվում է գրական տեքստը, բայց վերընթերցումն ու խոսքը շատ կարեւոր են մեր օրերում: Լիահույս եմ, որ մեր ներսում Բակունցը պետք է խոսի իր աղոթքով ու չքնաղ գրականությամբ», - եզրափակեց Գալստյանը:

Բանաստեղծ, թարգմանիչ Շանթ Մկրտչյանն Ակսել Բակունցին համարում է 20-րդ դարի հարուստ գրական ժառանգության թողած գրող, հզոր հեղինակ: Ըստ Մկրտչյանի, եթե Բակունց երեւույթը չլիներ, նրանից հետո չէին լինի բազմաթիվ հրաշալի գրողներ: «Մենք շատ ենք խոսում Ֆոլքների մասին, բայց այդ նույն աշխարհի խորքերը Գորիսում բացեց Բակունցը: Նրա «Պրովինցիայի մայրամուտ»-ը հիշենք: Բակունցն իր մտածողությամբ ներկա է այսօրվա գրականության մեջ: Նա մեր թանկն է, մեր մեծն է, որին պետք է ըստ արժանվույն գնահատենք», - շեշտեց գրողը:

Նրա խոսքով՝ Բակունցը 1937 թվականին գնդակահարվեց, սակայն նման թվականներ անընդհատ լինում են, եւ ժողովուրդը պետք է փրկի իր զավակներին:

Ակսել Բակունցի 125-ամյակը կնշանավորվի բազմաթիվ այլ միջոցառումներով. մեկնարկը տրվեց հունիսի 13-ին Ե. Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի «Ակսել Բակունցի տուն-թանգարան» մասնաճյուղում:

Հոբելյանական օրվա շրջանակում կայացավ հանդիպում հրապարակախոս Հակոբ Այնթապյանի հետ:

Միջոցառման շրջանակում տեղի կունենան Arloopa հավելվածով Ասլամազյանի «Բակունցի եւ մոր դիմանկարի» անիմացիայի եւ «Սյունյաց երկիր» թերթի՝ Ակսել Բակունցին նվիրված հատուկ համարի շնորհանդեսները: Թատերական ներկայացումներով հանդես կգան Գորիսի Վ. Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դերասանները, տեղի կունենա համերգային ծրագիր: Միջոցառումները կուղեկցվեն հյուրերի հետ զրույց-քննարկումներով, երեխաների համար խեցեգործության, նկարչության վարպետության դասերով:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՌՈԲԵՐՏ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ 85

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՄԵՐԳՆԵՐ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայության Կամերային երաժշտության ազգային կենտրոնը Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանն իրականացրել է «Տարիների մեղեդիներ» խորագրով համերգ՝ նվիրված Ռոբերտ Ամիրխանյանի ծննդյան 85-ամյակին: Համերգի ընթացքում հնչել են սիրված կոմպոզիտորի ինչպես հայտնի, այնպես էլ նոր ստեղծագործություններ:

Համերգին ելույթ են ունեցել Հայաստանի պետական կամերային երգչախմբի մենակատարներ Լուսինե Վարդանյանը, Էռա Հովսեփյանը, Նաիրա Հովհաննիսյանը, Անահիտ Հովհաննիսյանը, Սոֆյա Սայադյանը, Լուսինե Օրդուխանյանը, Արամ Ավետիսյանը, Վարդան Բաղալյանը, Մավր Մկրտչյանը: Գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժորն էր ՀՀ ժողովրդական արտիստ Ռոբերտ Մլքեյանը:

Ծրագրում ներառված էին կոմպոզիտորի «Ներիր ինձ, ես քեզ ցավ եմ պատճառել», «Կարոտ», «Փարիզյան տանգո», «Ինձ համար դու շող գարուն», «Երկու կռունկ», «Քո աչքերի խավարում», «Արեւոտ անձրեւ», «Քեզ հետ, իմ սեր», «Անանձնություն», «Ես մուկիկն եմ պույ-պույ»,«Երգն էլ ունի հոգի»,«Ինչ որ մի լույս ցոլցլաց», «Հայի աչքեր», «Ես վախենում եմ սեր բառը ասել», «Տղամարդիք», «Երեւան» (դուետ), «Գնաս բարով», «Իմ կարոտ եւ երկիր իմ» ստեղծագործությունները:

Նշենք, որ Ռոբերտ Ամիրխանյանի ծննդյան 85-ամյակին նվիրված «Տարիների մեղեդիներ» խորագրով երկրորդ համերգը տեղի ունեցավ հունիսի 13-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանն այսօր ընդունել է ՀՀ-ում Ղազախստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Բոլատ Իմանբաեւին:

Հանդիպման ընթացքում քննարկվել են սպորտի ոլորտում Հայաստանի եւ Ղազախստանի միջեւ համագործակցության խորացմանն ու զարգացմանը վերաբերող հարցեր:

Կողմերը կարեւորել են փոխգործակցության հեռանկարները հատկապես այս տարվա ապրիլին ստորագրված 2024-2026 թվականների համագործակցության ծրագրի շրջանակում:

Ողջունելով հյուրերին՝ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանն ընդգծել է Հայաստանի եւ Ղազախստանի միջեւ ձեւավորված բարեկամական ամուր կապերն ու համոզմունք հայտնել՝ սպորտի ոլորտում համագործակցության խորացումն անպայմանորեն նպաստելու է միջպետական կապերի ամրապնդմանը:

ԿԳՄՍ նախարարի տեղակալը նաեւ շնորհակալություն է հայտնել ղազախական կողմին Հայաստանում մայիսի 24-26-ն անցկացված ԱՊՀ երկրների ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի համաժողովին ակտիվ մասնակցության համար:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են նաեւ երկուստեք անցկացվող միջազգային մրցաշարերին մասնակցության ապահովմանը, համատեղ ուսումնամարզական հավաքների կազմակերպմանն ու փորձի փոխանակմանը վերաբերող այլ հարցեր:

17-ԱՄՅԱ ԷՄԻՆ ՕՀԱՆՅԱՆԸ՝ ԱՇԽԱՐՀԻ Մ-20 ՓՈԽՉԵՄՊԻՈՆ

17-ամյա Էմին Օհանյանը նվաճեց շախմատի աշխարհի մինչեւ 20 տարեկանների առաջնության արծաթե մեդալը: Վերջին տուրում Հայաստանի ներկայացուցիչը հաղթեց ֆիլիպինցի Դանիել Քուիզոնին եւ 11 հնարավորից վաստակեց 8,5 միավոր: Նույնքան միավոր վաստակեց չեմպիոնի կոչումը նվաճած ղազախ Նոգերբեկ Կազիբեկը: Նա վերջին տուրում հաղթեց Մամիկոն Ղարիբյանին, որը 8 միավորով գրավեց չորրորդ տեղը:

Հայաստանի ներկայացուցիչ Մարիամ Մկրտչյանը նվաճել էր մինչեւ 20 տարեկան աղջիկների առաջնության փոխչեմպիոնի կոչումը:

Վերջին տուրում Մարիամ Մկրտչյանը պարտության էր մատնել հնդիկ Ռավի Ռակշիտային եւ վաստակել 9,5 միավոր: Չեմպիոնի կոչումը նվաճել է հնդիկ Դիվյա Դեշմուխը, որը 11 հնարավորից վաստակել է 10 միավոր:

Մարիամ Մկրտչյանը ոչ մի պարտություն չկրեց այս առաջնությունում՝ 8 հաղթանակ, 3 ոչ ոքի:

● *Հունիսի 15-ին՝ ժամը 19:30-ին, Համազգային պետական թատրոնում տեղի կունենա Օ. Հենրիի «...Եվ նորից գարուն» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2000-3.500 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս ընդգրկվել որակավորված ներքին աուդիտորների ցանկում:

Հարութ Ստեփանյան (46 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով նախատեսված ցանկում ընդգրկվելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարություն կարող են դիմում ներկայացնել այն անձինք, որոնք ունեն Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի միջազգայնորեն ճանաչված հետեւյալ որակավորումներից առնվազն մեկը՝

1) ներքին աուդիտորների միջազգային ինստիտուտի կողմից իր կրթական ստանդարտներին համապատասխան անցկացված քննությունների արդյունքում տրված ներքին աուդիտորի որակավորումը (Certified Internal Audit- CIA) կամ հանրային հատվածի աուդիտորի որակավորումը (Certified Government Auditing Professional - CGAP),

2) որակավորված երդվյալ հաշվապահների ասոցիացիայի (ACCA) կողմից անցկացված առնվազն բազային (ֆունդամենտալ) 9 քննության (F1-F9) արդյունքում տրված հաշվապահ-աուդիտորի որակավորումը,

3) հանրային ֆինանսների եւ հաշվապահության արտոնագրված ինստիտուտի (Chartered Institute of Public Finance Accountancy: CIPFA) կողմից տրված որակավորումը,

4) որակավորված հանրային հաշվապահների ամերիկյան ինստիտուտի (American Institute of Certified Public Accountants) կողմից տրված հանրային հաշվապահի որակավորումը (CPA):

Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի այլ կառույցների կողմից տրված հետեւյալ որակավորումներից առնվազն մեկը՝

1) «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն տրված աուդիտորի որակավորումը,

2) Հայաստանի Հանրապետության հաշվապահների եւ աուդիտորների ասոցիացիայի (ՀՀԱԱ) կողմից տրված աուդիտորի որակավորումը:

ՀՀ ֆինանսների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ դիմումին կից պետք է ներկայացնել՝

- անձնագրի պատճենը,
- համապատասխան որակավորումը հավաստող փաստաթղթի պատճենը,
- հայտարարություն:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՀԱՐՑ. Ի՞նչ է Կենտրոնական բանկի անկախությունը, եւ ինչպե՞ս է այն չափվում:

Աշոտ Գեւորգյան (29 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Գների կայունության ապահովման համար ինստիտուցիոնալ կարեւոր նախապայման է ԿԲ-ների անկախությունը: Ուսումնասիրությունները վկայում են, որ ԿԲ-ների անկախությունը (գործառնական) նպաստում է իրականացվող դրամավարկային քաղաքականության վարկունակությանը՝ մեծացնելով շուկայի արձագանքը ԿԲ ազդակներին: Էմպիրիկ վերլուծությունները բացահայտել են ԿԲ-ի անկախության եւ ցածր գնաճի միջեւ ուղղակի կապ:

ՀՀ կենտրոնական բանկ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Դրամավարկային քաղաքականության իրականացման առումով տարբերակում են ԿԲ-ի անկախության երեք աստիճան՝

- նպատակի սահմանման,
- նպատակային ցուցանիշի սահմանման,
- գործառնական:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Մեկնարկել է «Բռնցքամարտի Երեւան քաղաքի բաց առաջնություն» միջազգային մրցաշարը:

Երեւանի քաղաքապետարանից տեղեկացնում են, որ մրցումներին մասնակցում են Բուլղարիայի, Իրանի, Լատվիայի, Հունգարիայի, Մոլդովայի, Ռուսաստանի, Վրաստանի եւ Հայաստանի շուրջ 150 մարզիկ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 8 + 10 +22 + 26
Կոտայքի լեռներ	+ 8 + 12 +21 + 24
Կոտայքի նախալեռներ	+ 15+ 17 +28 + 30
Գեղարքունիք	+ 10+ 13 +21 + 24
Լոռի	+ 9 + 13 +24 + 27
Տավուշ	+ 15+ 17 +28 + 31
Արագածոտնի լեռներ	+ 9 + 13 +21 + 24
Արագածոտնի նախալեռներ	+ 15+ 18 +28 + 31

Արարատ	+ 16 + 18 +31 + 33
Արմավիր	+ 16+ 18 +31 + 33
Վայոց ձորի լեռներ	+ 8 + 11 +22 + 24
Վայոց ձորի նախալեռներ	+ 16 + 18 +31 + 33
Սյունիքի հովիտներ	+ 18 + 22 +29 + 32
Սյունիքի նախալեռներ	+ 13 + 15 +25 + 28
ԼՂՀ	+ 13 + 14 +25 + 26
Երեւան	+ 19 + 21 +23 + 25

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **13.6.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*